# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

37ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 8 (1808) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 4, 2017
VOLUME 37, NO. 8 (1808) SATURDAY, MARCH 4, 2017

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Մարտի 1-ի Ծանր Բեռը

Լրացաւ «Մարտի 1-ի» 9-րդ տարելիցը երբ, Քոչարեանի բռնապետական իշխանութեան մայրամուտին, բանակը հանուեցաւ ժողովուրդի դէմ, որ տասնեակ հազարներով դուրս եկած էր բողոքելու՝ հերթական կեղծուած նախագահական ընտրութիւններու արդիւնքներուն դէմ:

Իշխանութիւններուն կողմէ կազմակերպուած սպանդի հետեւանքով, Երեւանի փողոցներուն վրայ հոսած արիւնը խլեց 10 անմեղ քաղաքացիներու կեանքը:

Այդ իրադարձութիւններէն 9 տարիներ ետք, տակաւին մութ կը պահուին դէպքերու ծալքերը ու գործուած ոճիրներու պատասխանատուները կը մնան անպատիժ:

Մարտ 1-ի դէպքերը դարձան ծանր բեռ մը, որուն տակ կը կքի երկիրը մինչեւ օրս: Այդ թուականէն ասդին Հայաստան կ'ապրի անկումի շրջան մը՝ քայքայուած տնտեսութիւն, համատարած աղքատութիւն, արտագաղթ, հասարակութեան եւ իշխանութեան միջեւ խզում: Այս բոլոր տագնապները յաղթահարելու անկարող՝ իշխող Հանրապետական կուսակցութիւնը կը ձգտի դարձեալ իր ձեռքերուն մէջ պահելու երկրի ղեկը ու այդ նպատակին հասնելու համար կ'օգտագործէ իր զինանոցին մէջ գտնուող ու իր տրամադրութեան տակ եղող՝ ժողովուրդի ճնշման ու զեղծարարութեան բոլոր միջոցները:

Իշխանութեան կը ձգտին նաեւ այդ օրերուն Քոչարեանի կողքին եղող արտաքին գործոց նախկին նախարար Վարդան Օսկանեանն ու բանակի գլխաւոր շտապի պետ՝ Սէյրան Օհանեանը: Այս երկու գործիչները, դաշինք կազմած, կը մասնակցին Ապրիլ 2-ին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն: Սակայն, Մարտի 1-ի իրադարձութիւնները բաւական ծանր բեռ դարձած են նաեւ անոնց համար: Ամէն քայլափոխի, լրագրողները հարցեր կ'ուղղեն այս երկուքին, Մարտ 1-ի դէպքերուն օրը անոնց ունեցած մասնակցութեան ու դերակատարութեան մասին: Օսկանեանն ու Օհանեանը թէեւ կը փորձեն իրենց մասնակցութիւնը լուսանցքային ներկայացնելու, սակայն ժողովուրդի յիշողութիւնը այդքան ալ կարճ չէ:

Շատ մը քաղաքական մեկնաբաններու կարծիքով, այս դաշինքի ետին կանգնած է Ռոբերդ Քոչարեանը: Նոյնիսկ Րաֆֆի Յովհաննիսեանի մասնակցութիւնը նոյն այդ դաշինքին, չապահովագրեր՝ խուսափելու «Քոչարեանի դաշինք» պիտակէն:

Մարտ 1-էն 9 տարիներ ետք, Հայաստանը պէտք ունի նոր իշխանութեան, Մարտի 1-ի ծանր բեռէն դուրս գալու համար:

**«ՄԱՍԻՍ»**

## Հայաստան-Եւրոպական Միութիւն Նոր Քաղաքական Համաձայնագիրի



Սերժ Սարգսեան եւ Տոնալտ Թուսք Պրիւքսէլի մէջ կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին

*Եւրոպական Միութեան հետ ընկերակցութեան համաձայնագիրի ձախողումէն երեք տարի ետք, Հայաստանն ու Եւրոմիութիւնը Փետրուար 27-ին համաձայնութեան եկած են նոր քաղաքական համաձայնագիրի շուրջ:*

*Փաստաթուղթի շուրջ բանակցութիւնները աւարտած են եւ այն կ'արտայայտէ Հայաստան-ԵՄ յարաբերութիւններու իրական ընդգրկումն ու խորութիւնը: Այս մասին գոհունակութեամբ յայտարարած է Նախագահ Սերժ Սարգսեան, Պրիւքսէլի Եւրոպական խորհուրդի նախագահ Տոնալտ Թուսքի հետ հանդիպման յաջորդած մամլոյ ասուլիսի ընթացքին:*

*Երեւանն ու Պրիւքսէլը այսպիսով կը փորձեն վերականգնել յարաբերութիւնները, որոնք որոշ չափով խզուած էին Սեպտեմբեր 3, 2013 թուականին, երբ Մոսկուայի մէջ Ռուսաստանի նախագահի հետ հանդիպումէն ետք, Սերժ Սարգսեանն անակնկալ յայտարարեց, որ Հայաստան մտադիր է անդամակցիլ Մաքսային իսկ յե-*

Շար.ը էջ 4

## ՍԴՀԿ Երիտ. Միութիւնը Փարիզի Մէջ Ցոյց Կազմակերպած է Ատրպէյճանի Հակահայկական Քարոզչութեան Դէմ




Փարիզի մէջ երիտասարդներ նստացոյց կը կատարեն Ատրպէյճանի հակահայ գործողութիւններուն դէմ

*ՍԴՀԿ «Նազարբէկ» Երիտասարդական Միութիւնը ցոյց կազմակերպած է Փարիզի մէջ Ատրպէյճանի հակահայկական քարոզչութեան դէմ:*

*Այս առթիւ հրապարակուած հաղորդագրութիւնը կը յայտնէ.*

*Կիրակի, 26 Փետրուար 2017-ին, Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մէջ տեղի կ'ունենար նուագահանդէս մը՝ նուիրուած ատրպէյճանական հակահայ փրոփականտին:*

*ՍԴՀԿ «Նազարբէկ» Երիտասարդական Միութիւնը զօրաշարժի կոչ հրապարակեց ու իր շուրջ հաւաքելով տարբեր երիտասար-*

Շար.ը էջ 4

## ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը Կը Զօրակցի Էրիք Կարսէթիին, Մոնիքա Ռոտրիկէզին եւ Այլ Թեկնածուներու



Լոս Անճելըսի թիւ 7 ընտրաշրջանի թեկնածու՝ Մոնիքա Ռոտրիկէզ

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) Մարտ 7-ին տեղի ունենալիք՝ Լոս Անճելըսի քաղաքապետական ընտրութիւններուն առթիւ իր զօրակցութիւնը յայտնած է շարք մը թեկնածուներու:*

*Լոս Անճելըսի քաղաքապետի ընտրութիւններուն ՀԱԽ իր զօրակցութիւնը կը յայտնէ ներկայիս քաղաքապետ Էրիք Կարսէթիի վերընտրութեան:*

*Սանլէնտ-Թահունկա հայաշատ շրջանը ընդգրկող թիւ 7 ընտրաշրջանէն ներս, ՀԱԽ կը պաշտպանէ Մոնիքա Ռոտրիկէզի թեկնածութիւնը:*

*Լոս Անճելըսի 13 ընտրաշրջանէն ներս, որ կ'ընդգրկէ Հոլիվուտի թաղամասերը, ներառեալ «Փոքրիկ Հայաստանը», ՀԱԽ իր զօրակցութիւնը կը յայտնէ Միթչ Օ'Ֆարրըլի վերընտրութեան:*

*ՀԱԽ իր զօրակցութիւնը կը յայտնէ նաեւ Պոպ Պլումընֆիլտին (քաղաքապետարանի 3-րդ ընտրաշրջան), Փոլ Քորթեզին (քաղաքապետարանի 5-րդ ընտրաշրջան), Կրէկորի Մարթաեանին, (Լոս Անճելըսի Ուսումնական Խորհուրդի 4-րդ ընտրաշրջան) եւ Արազ Բարսեղեանին (Լոս Անճելըսի Ուսումնական Խորհուրդի 6-րդ ընտրաշրջան),*

*Այս առթիւ ՀԱԽ իր հրապարակած յայտարարութեան մէջ կոչ կ'ընէ այս շրջաններու մէջ բնակող մեր հայրենակիցներու, մասնակցելու Մարտ 7-ի ընտրութիւններուն եւ քուէարկելու այս թեկնածուներուն, որոնք միշտ եղած են հայ համայնքի կողքին եւ ծառայած են Լոս Անճելըսի ամբողջ ժողովուրդին եւ նպաստած են քաղաքի յառաջդիմութեան:*

# Սերժ Սարգսեանը Շտապել է Մելիք-Ադամեան

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Սերժ Սարգսեանը Փետրուարի 25-ին ՀՀԿ Մելիք Ադամեան կեդրոնական գրասենեակում է հաւաքել կուսակցական այսպէս կոչուած ռէյտինգային թեկնածուներին: Հաւաքի պատճառը Մասիսում տեղի ունեցած միջադէպն էր, երբ միմիանց են բախուել ՀՀԿ ռէյտինգային ցուցակով առաջադրուած երկու թեկնածուների՝ Մուրադ Մուրադեանի եւ Արայիկ Գրիգորեանի թիմակիցները:

Կայծից յետոյ Սերժ Սարգսեանը թերեւս փորձում է թոյլ չտալ հրդեհի բռնկում, որը մարելը կարող է բարդ լինել:

Կասկած չկայ, որ Սարգսեանը նախազգուշացրել է ՀՀԿ ռէյտինգային թեկնածուներին, որ եթէ կրկնուեն այդօրինակ միջադեպեր, ապա հետեւանքը կարող է լինել ծանր: Սարգսեանը նրանց համար գուցէ կրկնել է խաղի կանոնները, որոնք պէտք չէ խախտել, իսկ գուցէ նաեւ ներկայացրել նոր կանոններ, որոնք էլ աւելի խիստ վերահսկողութիւն պէտք է ենթադրեն այդօրինակ միջադէպերը բացառելու համար:

Ռէյտինգային ընտրակարգի ներդրումը շատերին հիմք տուեց եզրակացնելու, որ դրա հետեւանքով ՀՀԿ-ականները մրցելու են միմիանց դէմ, իսկ քանի որ ՀՀԿ-ականները մրցելու այլ տարբերակ չունեն, քան ուժը, ապա միմիանց դէմ են բանեցնելու իրենց ուժը: Յատկապէս որ խօսքն այսպէս ասած օդիոզ ՀՀԿ-ականների մասին է, որոնք տեղաւորուել են ռէյտինգային ցուցակում:

Մասիսի միջադէպն արձանագրում է հենց այդ կանխատեսման կամ ենթադրութեան իրաւացիութի՞ւ՞նը, թէ՞ հակառակը՝ Մասիսը շեղում էր բացառութիւնից, կանոնից, պարզապէս Սերժ Սարգսեանը արագ է արձագանքում այդ շեղումները կանոն չդարձնելու համար:

Ռէյտինգային ընտրակարգն իսկապէս ստեղծում է հակասական վիճակ: Մի կողմից միմիանց դէմ են առաջադրւում իշխանութեան թեկնածուները, միւս կողմից այդ ընտրակարգը իշխանութեան համար տալիս է ձայների հաւաքագրման ամենաարդիւնաւէտ, ձայները առաւելագոյնս «քերելու» հնարաւորութիւնը, ինչի համար էլ իշխանութիւնը գնացել է այդ ընտրակարգի ներդրմանը:

Աներկբայ է, որ իշխող համակարգը չէր գնայ իր համար ռիսկային տարբերակի ներդրմանը եւ պէտք է ընտրեր նուազագոյն ռիսկ եւ առաւելագոյն էֆեկտ, կամ ռիսկի եւ էֆեկտի համադրութեան, յարաբերակցութեան տեսանկիւնից հանրագումարում ամենաէֆեկտիւ տարբերակը:

Այդ տեսանկիւնից, ՀՀԿ ռէյտինգային թեկնածուների միջեւ բախումները կամ դրանց հնարաւորութիւնը հանրութեան համար գուցէ դիտարժան տեսարան է, նոյնիսկ «սիրտ հովացնող», սակայն խորքային առումով այդ տեսարանները ոչ միայն կապ չունեն հանրային շահի հետ, այլ նոյնիսկ կարող են կատարել հանրային գիտակցութիւնը բթացնող դեր:

ՀՀԿ-ականները մրցում են միմյանց հետ, նոյնիսկ բախւում իրար, ուժ կիրառում, կարող են նոյնիսկ լինել ձերբակալուողներ: Առերեւոյթ դա ցոյց է տալիս իշխանութեան ճաքի, խնդիրների առկայութիւնը, ինչն էլ փորձում են հանրութեանը ոգի տուող քարոզչութեան ծառայեցնել նաեւ շատ ընդդիմադիր սուբիեկտներ:

Խորքային առումով դա այլ բան չէ, քան հանրային մոլորութեան կամ ինքնախաբէութեան ճանապարհ: Խնդիրն այն է, որ Հայաստանում փոխւում է իշխանութեան կառուցուածքն ու տրամաբանութիւնը, ընդ որում՝ այդ փոփոխութիւնն ամենեւին նոր միտում չէ: Հայաստանի իշխանութեան կառուցուածքում ծանրութեան կենդրոնը քրէա-օլիգարխիայից վաղուց տեղափոխուել է անվտանգութեան եւ իրաւապահ մարմիններ: Այստեղ իհարկէ կայ այդ մարմինների եւ քրէա-օլիգարխիայի սերտաճածութեան խնդիր, բայց մինչեւ որոշակի սահման: Որոշակի սահմանից այն կողմ իրավիճակն այլ է, եւ ներկայում իրաւապահ համակարգն է այն յենարանը, որի վրայ կառուցւում է իշխանութեան վերարտադրութեան որեւէ սցենարային տարբերակ:

Այդ պատճառով է նաեւ, որ իշխանութիւնն իրեն թոյլ է տուել գնալ ներկուսակցական մրցակցութեան առերեւոյթ ռիսկային տարբերակի ներդրմանը, քանի որ այդ մրցակցութիւնն այլեւս յենարանում չէ, որ տեղի է ունենալու:

Աւելին, այդ մրցակցութիւնը հենց իշխող համակարգի սնուցման աղբիւրն է, համակարգի էներգիայի վերարտադրութեան եւ կենսունակութեան գեներացիայի աղբիւր: Իհարկէ, այդ մրցակցութիւնը լինելու է այն որակի շրջանակում, որի կրողն են մրցակիցները: Իսկ նրանք այդքան էլ առաջադէմ որակների կրող չեն: Սակայն ներկայիս փուլում իշխող համակարգի համար առաջնայինը մրցակցութեան փաստն է ինքնին, այսինքն համակարգի «արտադրողականութեան աճի» խնդիրը:

Հայաստանի իշխող համակարգում «արտադրողականութեան» ճգնաժամ է, եւ մրցակցային համակարգի ներդրմամբ իշխանութիւնը փորձել է լուծել այդ ճգնաժամի խնդիրը՝ նուազագոյնը ընտրական վերարտադրութեան խնդիրը լուծելու համար, իսկ հնարաւորութեան դէպքում՝ նաեւ յետագայ խնդիրների լուծման որոշակի «պաշար» կուտակելու համար:

Այդ տեսանկիւնից, մոլորութիւն է այն, թէ հանրութիւնը, քաղաքացին կարող է իր շահը սպասարկելու խորքային խնդրի հարցում ձեռքերը տաքացնել իշխանութեան այդ մրցակցութեան վրայ:

Հանրութեան ձեռքերը կարող է տաքացնել ընդդիմութեան դաշտում առաւել որակեալ եւ արդիւնաւէտ մրցակցային համակարգի ձեւաւորումը, որի շնորհիւ ընդդիմադիր դաշտը կարող է վերականգնել իշխանութեան հանդէպ կենսունակութեան եւ մրցունակութեան, իսկ առաջին հերթին՝ հանրային վստահութիւն առաջացնող էներգիայի «արտադրութիւնը»:

Ընդդիմութեան դաշտն ունի սեփական «արտադրողականութեան աճ» ապահովելու մրցակցային մեխանիզմի անհրաժեշտութիւն, առանց որի գործնականում անհնար է լինելու լուրջ մրցակցութիւն առաջադրել իշխանութեանն ու յաւակնել դրանում թէկուզ համեմատական յաջողութեան:

«ԼՐԱԳԻՐ»

# Աղէտալի Թուեր - ՀՀԿ-ն Սպառնալիք է ՀՀ-ին

ՅԱՅԿ ԳԷՈՐԳԵԱՆ

Մօտ մէկ ամսից Հայաստանում տեղի կ'ունենան խորհրդարանական ընտրութիւններ, եւ ներկայումս իշխող ուժը՝ Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը կրկին յաւակնում է մեծամասնութիւն վերցնել ԱԺ-ում:

Գործի դնելով իր հսկայական ադմինիստրատիւ ռեսուրսը, սեփական օգտագործման օլիգարխներին, թաղային կրիմինալին, եւ, իհարկէ, ընտրակաշառքը, ՀՀԿ-ն կրկին կը փորձի մեծամասնութիւն վերցնել, եւ մեծ է հաւանականութիւնը, որ դա նրան կը յաջողուի:

Սակայն գլխաւոր գործառոյթը, որ պէտք է իրականացնի իշխող ուժը, ոչ թէ վերարտադրուելն է, այլ երկիրը զարգացման տանելը: Այ դա ՀՀԿ-ի մօտ ոչ մի կերպ չի ստացւում: Դրանում համոզուելու համար ուսումնասիրենք պաշտօնական, խիստ պաշտօնական կարեւորագոյն ցուցանիշները, որոնք արձանագրուել են ԱԺ-ի անցած ընտրութիւններից յետոյ, երբ ՀՀԿ-ն կրկին «յաղթեց» եւ դարձաւ մեծամասնութիւն խորհրդարանում:

### ՀՆԱ

ՀՀ համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) աճը հենց տնտեսական աճն է: 2012 թ. խորհրդարանական ընտրութիւններին նախորդած տարում՝ 2011 թ. մեր ՀՆԱ-ն կազմել է 10.1 միլիարդ տոլար: Անցած 4 տարիների ընթացքում պաշտօնական վիճակագրութիւնը անընդմէջ տնտեսական աճ է ցոյց տուել, սակայն 2016-ի տուեալներով՝ մեր ՀՆԱ-ն կը կազմի 10.3 միլիարդ տոլար, այսինքն, 4 տարուայ ընթացքում մեր տնտեսութիւնը աճել է ընդամէնը 0.2 մլրդ տոլարով, կամ 0.02 տոկոսով: Կամ տարեկան միջին տնտեսական աճը կազմել է 0.005 տոկոս:

### ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Ի տարբերութիւն տնտեսութեան, մեր պետական պարտքը ՀՀԿ գլխաւորութեամբ աճել է գլխապտոյտ արագութեամբ: 2011 թ. վերջին այն կազմում էր 4.2 մլրդ տոլար, հիմա 5.9 միլիարդից աւելի է: 4 տարուայ ընթացքում պարտքը աճել է 1.7 միլիարդ տոլարով:

### ՀԱՐԿԵՐ

Ջնայած պնդումներին, թէ իշխող ՀՀԿ-ի գլխաւորութեամբ ընթանում է անզիջում պայքար ստուերային տնտեսութեան դէմ, սակայն պիւտճէ մուտքագրուած հարկերի ծաւալները, մեղմ ասած, չեն ապացուցում դա: Ինչպէս երեւում է գծապատկերից, 2013 թուականից սկսած հաւաքագրուած հարկերի ծաւալը սահուն եւ յամառօրէն նուազել է: Պիւտճէի եկամուտների թերակատարումը անցած տարիներին դարձել է խրոնիկ:

### ԱՐՏԱԳԱՂԹ

ՀՀԿ-ի իշխանութեան անցած փուլի՝ 2012-2016 թթ. ընկած ժամանակահատուածում Հայաստանից արտագաղթը կրել է համեմատաբար կայուն բնոյթ: Դա երեւում է տարիների կտրուածքով Հայաստան ժամանած եւ Հայաստանից հեռացած մարդկանց տարբերութիւնից: Մեր պաշտօնական վիճակագիրները անընդմէջ պնդում են, թէ ժամանած եւ մեկնած մարդկանց թուերի տարբերութիւնը արտագաղթը չէ, սակայն տարրական թուաբանութիւնը այլ բան է ցոյց տալիս: Ափսէի մէջ ունենք 10 խնձոր: Տարուայ ընթացքում դրանից 6-ը վերցնում ենք, 4-ը հետ դնում տեղը: Ափսէի մէջ կը մնայ 8 հատ խնձոր: Ինչ մեթոդոլոգիայով էլ հաշուենք, այն երկուսը անվերադարձ հեռացած խնձորներ են:

2012-2016 թթ. ընթացքում պաշտօնական տուեալներով Հայաստանից հեռացել ու չի վերադարձել 207 հազար մարդ, կամ ՀՀ բնակչութեան շուրջ 7 տոկոսը:

ՀՀԿ-ի իշխանութեան հետեւանքները փաստող պաշտօնական վիճակագրութիւնը կարելի է շարունակել: Օրինակ, յանցաւորութեան մակարդակը, որը անշեղօրէն աճում է, կամ օտարերկրեայ ներդրումների ծաւալները, որոնք հասել են զրոյական մակարդակի: Սակայն կայ մէկ այլ, նոյնքան պաշտօնական վիճակագրութիւն՝ որքան յետընթաց է ապրում Հայաստանը, այնքան շատ ձայն է «ստանում» ՀՀԿ-ն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՉԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# ՀՀ Վարչապետ Կարէն Կարապետեանի Կոչը Սփիւռքահայութեան



Վարչապետ
Կարէն Կարապետեան

Վարչապետ Կարէն Կարապետեան փետրուար 27-ին կոչով մը դիմած է Սփիւռքի հայրենակիցներուն՝ մասնակից ըլլալու հայրենիքի ապագայի կառուցման:

«Պատիւ ունիմ կոչով դիմելու ձեզի եւ բոլոր անոնց, որոնք անտարբեր չեն Հայաստանի նկատմամբ՝ մասնակից ըլլալու հայրենիքի ապագայի կառուցման:

Հայաստանը եւ Սփիւռքը մէկ ամբողջի երկու մասն են՝ իրարու հետ կապուած պատմութեան մէկ շղթայով, մէկ ճակատագրով, հայրենիքի ապագային վերաբերեալ անհանգստութեամբ: Մենք պատասխանատուութիւն ունինք մէկս միւսին նկատմամբ, որ մեզ կը համոզէ միաւորել ուժերը, բազմապատկել հնարաւորութիւններն ու շտկել մեր կեցուածքը աշխարհի նիստուկացին մէջ: Մենք այլ տարբերակ չունինք՝ քան լաւ երկիր կառուցելու եւ հզօր ու արդար Հայրենիք ունենալու հրամայականը», ըսած է վարչապետը իր կոչին մէջ:

«Մենք կը հրաւիրենք Սփիւռքի մեր կառավարիչները, մշակութային գործիչները, կրթութեան եւ գիտութեան ոլորտի միջազգային ճանաչում ունեցող հայրենակիցները մասնակից դառնալու երկրին մէջ ընթացող բարեփոխումներուն՝ առաջին հերթին կառավարման նոր մշակոյթ բերելու, Սփիւռքի մեր լաւագոյն մասնագէտներու գիտելիքներն ու ներուժը համահայկական նպատակներուն ծառայեցնելու համար:

«Այս առումով Սփիւռքը մեզի համար առաւելութիւն է: Զօգտագործել Սփիւռքի ներուժը, կը նշանակէ ըլլալ եսակեդրոն ու ներփակուած: Զտրամադրել Սփիւռքի մէջ առկայ յառաջադէմ միտքը մեր գործընկերներուն, երիտասարդներուն եւ ուսանողներուն, կը նշանակէ ըլլալ անարդիւնաւէտ՝ այսօրուան արագ փոխուող աշխարհին մէջ», շարունակելով ըսած է վարչապետը:

«Վստա՜հ եղէք, ամենալաւ երկիրը հայերուն համար Հայաստանը պիտի ըլլայ: Մեր երկրի ապագայով մտահոգ, անհանգիստ ու պարզապէս սրտի կանչ ունեցող իւրաքանչիւր հայ մարդ ընելիք ունի այս ճանապարհին: Անկախ ապրելու վայրէն, կուսակցական պատկանելութենէն եւ ընկերային դիրքէն՝ մենք բոլորս ունինք մէկ գաղափար, որուն շուրջ պէտք է միաւորուինք եւ համախմբուինք՝ ուժեղ, պատմական արժէքներն ու աւանդոյթները պահպանող, բայց եւ ժամանակակից, հպա?րտ Հայաստան:

«Կոչ կ'ընեմ՝ միասին ստեղծենք այնպիսի հայրենիք, որ աշխարհի մէջ հպարտութեամբ մեզ հայ կոչենք:

«Սիրով կը սպասենք ձեզի», եզրակացնելով ըսած է ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան:

# Հայաստանի Հասարակութեան Կազմակերպութիւններու Կոչը Սփիւռքին

Հայաստանեան խումբ մը հասարակական կազմակրպութիւններ հանդէս եկան յայտարարութեամբ՝ կոչ ընելով սփիւռքահայութեան, որպէս դիտորդներ մասնակցելու Ապրիլ 2-ի խորհրդարանական ընտրութիւններուն:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է. «Մենք՝ Հայաստանի քաղաքացիական հասարակութեան եւ իրաւապաշտպան մի խումբ կազմակերպութիւններս, սոյն բաց նամակով դիմում ենք սփիւռքի մեր հայրենակիցներին՝ անհատների, կազմակերպութիւնների եւ ոչ ֆորմալ խմբերի՝ աքթիւ դիրքորոշում ստանձնելու Հայաստանի քաղաքական կեանքում:

« 1991թ. Հայաստանի անկախութիւնից ի վեր ապրում ենք անմխիթար պայմաններում, ինչի ականատեսն էք նաեւ դուք. աղքատութիւն, բնակչութեան քանակի նուազում եւ ազգային ինքնիշխանութեան աստիճանական նահանջ: Շարունակաբար կեղծուող ընտրութիւններն ու քաղաքական կոռուպցիան (կաշառակերութիւնը) գրեթէ ողջ սոցիալ-տնտեսական իշխանութիւնը կեդրոնացրել են ոչ ներկայացուցչական օլիկարխիկ վերնախաւի ձեռքում: Բնական ռեսուրսները սպառւում են՝ ծառայելով կարճատեւ եւ փոքր խմբային շահերին, աղքատութիւնն ու սոցիալական անարդարութիւնը ահագնացող չափերի են հասնում՝ մի խումբ որոշում կայացնողների բարեկեցութեան աճին զուգահեռ: Քաղաքացիների քաղաքական ու քաղաքացիական իրաւունքները պարբերաբար ոտնահարւում են, անարդարութեան դէմ խաղաղ հաւաքները դաժանօրէն ճնշւում են, կախման մէջ գտնուող դատական իշխանութիւնն արդար դատավճիռներ չի կայացնում՝ աւելացնելով քաղաքական բանտարկեալների թիւը:

«Անկախութիւնից 25 տարի անց նման պայմաններն այլեւս անընդունելի են: Առաջին հայեացքից թերեւս ոչ այդքան ակնյայտ, սակայն հենց ժողովրդավարութեան պակասով են պայմանաւորուած միւս գրեթէ բոլոր ազգային խնդիրները: Ցիրաւի 21-րդ դարում ժողովրդավարութիւնն է ընկած պետութեան կառուցման հիմքում:

«Ցղելով այս կոչը, ցանկանում ենք յայտնել, որ մեծապէս զգում ենք ձեր կարիքը ոչ թէ ձեր նուիրատուութիւններով ու արտերկրից ուղարկուող փոխանցումներով, այլ՝ ձեր ոգու ու ֆիզիքական ներկայութեամբ Հայաստանում՝ ընտրական տեղամասերում ներգրաւուելով դիտորդական առաքելութիւնում եւ ստանձնելով ձեր դերը Հայաստանի ժողովրդավարութեան այս պատմական փնտռտուքում:

«Առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները երկրի համար յոյժ կարեւոր են: 2015թ. սահմանադրական հանրաքուէի արդիւնքում, որն ինքնին ուղեկցուել է լայնածաւալ կոռուպցիայով, Հայաստանն սկսում է անցում կատարել դէպի խորհրդարանական հանրապետութիւն: Սա նշանակում է, որ առաջիկայում նախագահական ընտրութիւններ չեն լինի եւ խորհրդարանական ընտրութիւններն են կանխորոշելու Հայաստանի ապագան:

«Մենք կոչ ենք անում սփիւռքի բոլոր կազմակերպութիւններին, հաստատութիւններին ու աքթիւ անհատներին միանալ մեզ մեր ջանքերում եւ աջակցել՝ յանուն արդարութեան, մարդու իրաւունքների պաշտպանութեան, ազատ ու արդար ընտրութիւնների, հաշուետու կառավարման, քաղաքացիական իրաւունքների ու արժանապատուութեան: Կապ հաստատէք մեզ հետ, եկէ՛ք մեզ մօտ՝ միասին անցնելու այս խրթին ճանապարհը:

«Հայաստանի ապագան ժողովրդավարական է, եւ այդ ապագան սկսւում է այսօր ձեր մասնակցութեամբ եւ համախմբմամբ»:

# ՀՀԿ Ղեկավար Անդամ. «Մասսայական Թալանը Տարիներ Շարունակուել է»



ՀՀԿ ղեկավար անդամ
Կարէն Կարապետեան

ՀՀԿ գործադիր մարմնի անդամ Կարէն Կարապետեանի կարծիքով, ՀՀԿ անդամ լինելը իրեն կը խանգարի առաջիկայ ընտրութիւններում:

«Որովհետեւ հանրութեան մէջ լուրջ դժգոհութիւններ կան: Բնականաբար, դա իր ազդեցութիւնը կը թողնի նաեւ իմ ռեյտինգային վարկանիշի վրայ», - պատասխանելով «Ազատութեան» հարցին ասել է Կարապետեանը:

Նա ընդունեց, որ Սերժ Սարգսեանի գիտի այդ մասին. - «Բոլորս գիտենք: Ոչ մէկը միամիտ չի էսօր ստեղ: Իսկ մի բան հաստատ դուք շատ լաւ էլ գիտէք, որ երբ հանրութեան մէջ մէկ միլիոն եւ աւել, դա պաշտօնական թուերն են, ընչազուրկ խաւ կայ, չկայ էդպիսի մի երկիր, որ ինքը իր իշխանութեանը սիրի...»

Կարապետեանը խորհուրդ ունի իշխանութիւնից դժգոհողներին. - «Ինչո՞ւ էք ընտրում իշխանութեանը: Ես խորհուրդ կը տամ չընտրէք: Ովքեր համարում են, որ իշխանութիւնը ճիշդ չի գործում, եւ կը գտնէք այն ուժը, որը շարժիչ ուժ կը լինի, ուրեմն ընտրէք նրանց»:

Նրա համոզմամբ, հանրութիւնը բոլոր քաղաքական ուժերից մեծ դժգոհութիւններ ունի, ուստի պնդելը, թէ Հանրապետականին կը յաջողուի ձեւաւորել կայուն խորհրդարանական մեծամասնութիւն, մոսկուաբնակ միլիարդատէր, «Հայաստանի էլեկտրական ցանցերի» սեփականատէր Սամուէլ Կարապետեանի եղբայրը, «թեթեւամտութիւն» է համարում. - «Էդ որ բոլորը տենց մեծ-մեծ խօսում են, թող գնան տեղերում նայեն հանրութեան հոգեվիճակը, սոցիալական վիճակը... Հը Երեւանից մի հատ դուրս եկէք էլի... Յետոյ նոր փորձեն մեծ-մեծ խօսել... Շատ մեծ դժգոհութիւն կայ եւ՛ իշխանութիւններից, եւ՛ մեծ հիասթափութիւն կայ, իմ պատկերացմամբ, ընդդիմութիւնից»:

«Հետեւաբար», - շարունակեց Կարապետեանը, - «հանրութիւնը ինքը կ'որոշի: Հանրութիւնը բազմաթիւ շերտերից ա բաղկացած: Անապահով խաւը մեծամասամբ կ'աջակցի ընդդիմադիր ուժերին»:

# Մարուքեան Ընտրողներին Բացատրում է Իշխանութեանին խաբելու ձեւը



«Լուսաւոր Հայաստան»
կուսակցութեան ղեկավար
Էդմոն Մարուքեան

Եթէ իշխանութիւնները փորձում են ճնշումների միջոցով մարդկանցից ձայներ կորզել, նրանց խաբելու ձեւ կայ: Այս մասին փետրուարի 28-ին ԱԺ-ում խորհրդարանական ելոյթների ժամին յայտնել է «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան ղեկավար ու «Ելք» դաշինքում թիւ մէկ թեկնածու Էդմոն Մարուքեանը:

Եթէ իշխանութիւնները տեղերում համոզում են մարդկանց, որ քուէախցիկը հսկւում է տեսախցիկներով, ապա նրանց հաւատալ պէտք չէ՝ ոչ քուէախցիկը, ոչ էլ դրա շուրջը տարածքը խցիկով չեն երեւում, կարելի է ազատ քուէարկել:

Կայ մարդկանց վրայ ճնշելու երկու միջոց, բայց երկուսն էլ կարելի է շրջանցել: Այդ գիտելիքները կարող են օգտակար լինել բիւջետային աշխատողներին, որոնց վրայ ճնշում գործադրելը իշխանութիւնների համար աւելի հեշտ է, յայտնել է Մարուքեանը:

«Ենթադրենք, ձեզնից պահանջում են քուէարկել ՀՀԿ-ի օգտին: Իսկ դուք ծրարի մէջ մէկ այլ քուէաթերթիկ էք դրել: Ելքի մօտ ձեզնից պահանջում են ցոյց տալ, թէ որ 8 քուէաթերթիկներն են մնացել, որ հասկանան, թէ որն է եղել 9-րդը: Այսինքն ձեր ձեռքին չպէտք է մնացած լինի ՀՀԿ-ով քուէաթերթիկը:

Պէտք է այսպէս անել՝ քուէարկէք ում օգտին ուզում էք: ՀՀԿ-ով քուէաթերթիկը նետէք զամբիւղը: Դրա փոխարէն հանէք մէկ ուրիշ ուժի քուէաթերթիկ՝ օրինակ «Ելք»-ինը, եթէ նրա օգտին էք քուէարկել: Այսպիսով քուէաթերթիկների թիւը կը մնայ առաջուայ պէս 8-ը, իւրաքանչիւրից մէկական: Բայց դրանց մէջ ՀՀԿ-ն չի լինի»,- յայտնել է Մարուքեանը:

## ԼՈՒՐԵՐ

# «Սթրաթֆոր». Երեւան-Մոսկուա Յարաբերութիւնները Վերջին Շրջանին Քննութեան Ենթարկուեցան

«Սթրաթֆոր» վերլուծական կեդրոնի փորձագէտներու համոզմամբ, մինչ ղարաբաղեան հակամարտութիւնը կը ձգձգուի, կողմերէն ոչ մէկը չի կրնար կտրուկ շարժում կատարել, քանի որ, առաջին հերթին, անոր համար չստանար Ռուսաստանի համաձայնութիւնը:

Հայաստանի առնչութեամբ, փորձագիտական կեդրոնի վերլուծաբանները արձանագրած են՝ «Մոսկուայէն կախում ունեցող Ռուսաստանի դաշնակից երկրի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ վերջին շրջանին քննութեան ենթարկուեցան»:

«Հակառակ Մոսկուայի գլխաւորած ռազմական դաշինքին՝ ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցութեան եւ երկրի տարածքին ռուսական հինգ հազարանոց ուժեղ զօրախումբի առկայութեան, Մոսկուան շատ աննշմարելի աջակցութիւն կը ցուցաբերէ Երեւանին՝ Ատրպէյճանի հետ շարունակուող հակամարտութեան մէջ:

Երկու հարեւանները (Հայաստան եւ Ատրպէյճան) բաժանող առանցքային խնդիրը Լեռնային Ղարաբաղն է, որ խորհրդային ժամանակաշրջանին Ատրպէյճանին մաս կը կազմէր: Այնտեղ, սակայն, բնակչութեան մեծ մասը հայեր էին, իսկ 1994 թուականի պատերազմի արդիւնքով Ղարաբաղը անջատուեցաւ Ատրպէյճանէն»,- կը գրէ «Սթրաթֆոր»-ը:

Հակամարտութեան հետեւանքով երկու երկիրներու միջեւ մինչեւ հիմա սահմանային փոխհրաձգութիւններ տեղի կ՛ունենան,կը նշեն փորձագէտները, ընդգծելով, որ անցեալ տարուայ Ապրիլին սրուած «Թշնամութեան ժամանակ» Ռուսաստանը չէզոք դիրքորոշում որդեգրած է, յիասթափեցնելով Հայաստանին՝ անվտանգութիւնը չապահովելու եւ քաղաքական աջակցութիւն չցուցաբերելու պատճառով:

Ըստ վերլուծական կեդրոնի փորձագէտներուն, քանի որ Հայաստանը այընտրանքային գործընկերներ չունի, Երեւանին ուրիշ ընտրութիւն չի մնար, քան Ռուսաստանի ռազմավարական գործընկերութեան պահպանումը: Եւ այդ մէկը՝ վերջին շրջանին Մոսկուայի եւ Պաքուի միջեւ ռազմական համագործակցութեան աճի պայմաններուն մէջ:

«Սթրաթֆոր» կը նշէ նաեւ, թէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ հակամարտութեան մէջ Ռուսաստանը զօրացուցած է «գլխաւոր դատաւորի իր դիրքը», նշելով, որ այդ դիրքով Մոսկուան ի զօրու է Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը օգտագործելով երկու երկիրներուն մէջ իրացնել իր ռազմավարական շահերը:

«Սթրաթֆոր», այնուհետեւ, կը շարունակէ. «Ատրպէյճանը շատ շահագրգիռ է ԼՂ-ի մէջ «ստատուս քոն» փոխելու հարցով եւ այդ նպատակով կը ձգտի սերտօրէն աշխատիլ Ռուսաստանի հետ, կարգաւորման վերսկսած բանակցութիւններու արդիւնքով տարածքներ վերադարձնելու ցանկութեամբ: Այս ձգտումը Ռուսաստանը կրնայ խաղարկել իր օգտին՝ մեծցնելու համար Ատրպէյճանի վրայ ունեցած իր ազդեցութիւնը, կը նշեն փորձագէտները:

# Ղարաբաղի Մէջ Ոգեկոչած է Սումկայիթի Զարդերու Զոհերու Յիշատակը




Նախագահ Բակօ Սահակեան անմեղ զոհերու յիշատակը յաւէրժացնող յուշակոթողին ծաղիկ կը զետեղէ

Սումկայիթի Ջարդերու 29-րդ տարելիցին առիթիւ, Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեան 28 Փետրուարին Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանի եւ հանրապետութեան բարձրաստիճան ղեկավարութեան ուղեկցութեամբ այցելած է Ստեփանակերտի յուշահամալիր եւ ծաղիկներ զետեղած անմեղ զոհերու յիշատակը յաւէրժացնող յուշակոթողին: Այս մասին կը տեղեկացնեն Արցախի Հանրապետութեան Նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութենէն:

Տարելիցի կապակցութեամբ յայտարարութեամբ հանդէս եկած է Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովը՝ կոչ ընելով միջազգային հանրութեան եւ բոլոր երկիրներու խորհրդարանական կառոյցներուն դատապարտել Սումկայիթի հայ բնակչութեան զանգուածային ջարդերը՝ անոնց տալով պատշաճ իրաւական գնահատական:

Ըստ Ղարաբաղի խորհրդարանի պաշտօնական կայքէջին, յայտարարութեան մէջ, ըսուած է. - «1988-ի փետրուարի 27-ից 29-ը Ատրպէյճանական ԽՍՀ Սումկայիթ քաղաքում ատրպէյճանական իշխանութիւնների կողմից իրականացուել են նախապէս ծրագրուած եւ կազմակերպուած զանգուածային ջարդեր հայ բնակչութեան նկատմամբ: Օգտուելով ամենաթողութիւնից եւ գործի դնելով դաժանութեան բոլոր հնարաւոր գործիքները՝ ջարդարարներն անողոքաբար սպանել ու խոշտանգել են մի քանի տասնեակ հայերի, իսկ քաղաքն իրենց ձեռքով կառուցած աւելի քան 20 հազար հայ անձանց ենթարկել բռնութիւնների ու թալանի»:

# Թուրքիոյ Սահմանադրական Դատարանը Մերժած է Կարօ Փայլանի Դիմումը

Թուրքիոյ Սահմանադրական դատարանը մերժած է «Ժողովուրդներու Դեմոկրատական» կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլանի դիմումը՝ մեճլիսի (խորհրդարան) մէջ իր խօսքերը արձանագրութենէն հանելու ու իրեն 3 նիստ չմասնակցելու պատիժը բողոքարկելու կապակցութեամբ:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ հայկական «Ակօս»-ը, Թուրքիոյ Սահմանադրական դատարանը «Պաշտօնաթերթի» միջոցով յայտնած է, որ Սահմանադրական Դատարանը մերժած է Կարօ Փայլանի հայցը:

Նշուած է, որ Սահմանադրական Դատարանին մէջ ձայներու մեծամասնութեամբ որոշուած է մերժել Կարօ Փայլանի հայցը:

Նշենք, որ Կարօ Փայլան Թուրքիոյ խորհրդարանէն ներս ելոյթի ժամանակ խօսած էր Հայոց ցեղասպանութեան մասին, որմէ ետք խորհրդարանի ղեկավարութիւնը որպէս պատիժ արգիլած էին 3 նիստի անոր մասնակցութիւնը, ինչպէս նաեւ խորհրդարանի նիստի արձանագրութենէն հեռացուցած էին իր խօսքի մէջ Հայոց ցեղասպանութեան հետ կապուած հատուածը:

Կարօ Փայլան այս որոշումները հակասահմանադրական համարած էր ու դիմած էր Սահմանադրական Դատարան:

# Փարիզի Մէջ Ցոյց

Շարունակուած էջ 1-էն

դական միութիւններ եւ միասնական ճակատ կազմելով հակադրուեցան Ատրպէյճանի մենատիրական համակարգի ստախօսութեան փորձերուն դէմ:

«Մենք հոն ներկայ էինք բողոքելու համար այս ձեռնարկին դէմ որ կը միտէր պղծելու հայու հուչակը, պատրուակներ փնտռելու համար ապագային կայանալիք Արցախի դէմ յարձակումները արդարացնելու համար:

«Քարիզի գինին արձանագրած անկումը, պատճառ դարձաւ դանդաղեցնելու Ատրպէյճանի տնտեսութիւնը եւ բարձրացնելու անգործներու թիւնը: Այս ընկերային եւ տնտեսական հարցերէն խուսափելու համար Ատրպէյճանի մենատէրը կը պարզէ պատերազմի վախը:

«Արդարացնելու համար այս պատերազմական վիճակը, ան պէտք ունի թշնամիի մը: Այս նուազահանդէսը, որուն նպատակն է հայերը ներկայացնել որպէս մարդասպաններ, կ՛օգտագործուի՛ հանրային կարծիքը պղտորելու համար յարձակումի մը ժամանակ:

«Մենք, ՍԴՀԿ «Նազարբէկի» երիտասարդներս, պիտի շարունակենք պայքարիլ մենատէր, ցեղապաշտ եւ ֆաշիստական Ատրպէյճանին դէմ: Բնաւ պիտի չընդունինք որ արիւնարբու Ատրպէյճանը որ 1990-ին, 50 հազար հայեր ջարդեց ու տեղահանեց Սումկայիթեան եւ Պաքուի բոկրոմներու ընթացքին, յաջողի ազատօրէն գալ Ֆրանսա եւ կատարէ իր ցեղապաշտ փրոփականտը»:

# Հայաստան-Եւրոպական Միութիւն

Շարունակուած էջ 1-էն

տոյ նաեւ Եւրասիական Միութեան: Այդ յայտարարութեամբ Հայաստանի ղեկավարը, ըստ էութեան, հրաժարեցաւ Եւրոմիութեան հետ աւելի քան երեք տարի տեւած բանակցութիւններէն ետք սպասուող ընկերակցութեան համաձայնագիրի կնքումէն:

Հակառակ անոր, Ռուսաստանի գլխաւորած տնտեսական դաշինքի անդամ Հայաստանը յայտարարած էր, թէ կը փաեաքի շարունակել Եւրոմիութեան հետ երկխօսութիւնը՝ քաղաքական եւ առեւտրային ոլորտներու մէջ:

Ընդհանուր առմամբ նախորդ երկու տարիները, Նախագահ Սարգսեանի գնահատմամբ, ՀՀ-ԵՄ համագործակցութեան տեսանկիւնէ առանձնացած են աշխուժութեամբ, զգալիօրէն զարգացած է քաղաքական երկխօսութիւնը եւ ընդլայնուած է համագործակցութիւնը տարբեր ոլորտներու մէջ:

Սարգսեանի խօսքով՝ Տոնալտ Թուսքի հետ քննարկած են նաեւ Հայաստան-ԵՄ օրակարգի այլ հարցեր, որոնց շարքին՝ տարածաշրջանային եւ միջազգային զարգացումները:

Հայաստանի Նախագահը Պելճիքայի մայրաքաղաք ժամանած էր եռօրեայ աշխատանքային այցով. Եւրոխորհուրդի Նախագահի հետ հանդիպումէն բացի կը կայացան նաեւ շարք մը հանդիպումներ այլ բարձրաստիճան պաշտօնեաներու հետ՝ Եւրոյանձնաժողովի Նախագահի, Եւրոխորհրդարանի Նախագահի, ՆԱԹՕ-ի բարձրաստիճան ղեկավարութեան եւ Եւրամիութեան դիւանագիտութեան ղեկավարի հետ:

«Հայաստան, որու անկախութեան, ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան մենք կ՛աջակցինք, կարեւոր գործընկեր է Եւրոպական Միութեան համար», - յայտարարած է Եւրոխորհուրդի Նախագահ Տոնալտ Թուսք:

Անդրադառնալով Եւրոմիութիւն - Հայաստան համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրին՝ Թուսքը նշած է. «Այսօր գոհունակութեամբ կրնանք յայտարարել, որ աւարտած ենք համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան նոր համաձայնագիրի շուրջ Եւրոմիութիւն-Հայաստան բանակցութիւնները: Այս նոր համաձայնագիրը պիտի ընդլայնէ մեր յարաբերութիւններու շրջանակը՝ նկատի առնելով մեր նոր, ընդհանուր աշխարհաքաղաքական շահերը եւ այն մարտահրաւէրները, որոնց կ՛առերեսուինք միասին»:

## Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մէջ Ընդհանուր Համաձայնութիւն Ձեռք Բերուեցաւ Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Հարցերուն Շուրջ



Փետրուարի 23-24-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցան հանդիպումներ, որոնց կը մասնակցէին Հայոց Հովուապետի հրաւէրով Մայր Աթոռ ժամանած Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան միաբան երեք եպիսկոպոսները՝ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթէշեան, Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Պեքճեան եւ Պատրիարքութեան Կրօնական ժողովի ատենապետ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալեան:

Փետրուարի 23-ի հանդիպումէն առաջ, գլխաւորութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գարեգին, Արամ եւ Սահակ Սրբազանները այցելեցին Մայր Տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առջեւ միասնական աղօթք կատարեցին՝ Կ.Պոլսոյ դարաւոր Պատրիարքական Աթոռի պայծառութեան, առկայ մարտահրաւէրներու յաղթահարման եւ պոլսահայ համայնքէն ներս խաղաղութեան ու համերաշխութեան վերահաստատման համար: Աղօթք բարձրացուեցաւ առ Աստուած նաեւ Աթոռի հանգստեան կոչուած գահակալ Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի համար, որ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի մէջ կը շարունակէ մնալ մշտական խնամքի տակ:

Երկօրեայ քննարկումներու ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան կեանքի մէջ վերջին օրերուն տեղ գտած իրադարձութիւններուն, պատրիարքական ընտրութիւններու կազմակերպման գործընթացի շուրջ յառաջացած յուզումներուն ու տարակարծութիւններուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբազան Հայրերուն յորդորեց Պատրիարքական Աթոռի գերագոյն շահերու գիտակցութեամբ՝ բոլոր ջանքերը ի գործ դնել հոգեւորականաց միջեւ եւ պոլսահայութեան կեանքէն ներս փոխըմբռնման, հաշտութեան ու եղբայրասիրութեան ոգիի ամրապնդման համար: Նորին Սրբութեան թելադրութիւնն էր փոխհասկացողութեամբ եւ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ կանոններու ու Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան կողմէ որդեգրուած կանոնական եւ աւանդական ընթացակարգերու պահպանութեամբ լուծման առաջնորդել Պատրիարքական ընտրութիւններու ամբողջ գործընթացը:

Ստեղծուած իրավիճակին անոր հանգուցալուծման ուղիներուն վերաբերեալ Սրբազան Հայրերու կողմէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին տրուեցան անհրաժեշտ լուսաբանութիւններ, ներկայացուած տեսակէտներու շուրջ տեղի ունեցան քննարկումներ: Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան միաբանները նաեւ առանձնաբար քննարկեցին Պատրիարքութեան առջեւ ծառացած մարտահրաւէրները:

Տեղի ունեցած հանդիպումներու եւ քննարկումներու արդիւնքին ձեռք բերուեցաւ հետեւեալ ընդհանուր համաձայնութիւնը.

- Պատրիարքութեան Կրօնական ժողովի հրաւէրով Եկեղեցական համագումար ժողովը մինչեւ տարւոյս Մարտի 15-ը կը կատարէ տեղապահի ընտրութիւն: Տեղապահի ընտրութեամբ, ըստ Եկեղեցւոյ կանոնակարգի, կը դադրին Պատրիարքական ընդհանուր փոխանորդի լիազօրութիւնները,

- Աթոռի միաբան եպիսկոպոսները հաւասար իրաւունք ունին ներկայացնելու իրենց թեկնածութիւնը տեղապահի ընտրութիւններուն,

- Տեղապահի ընտրութիւններէն վերջ Կրօնական ժողովը կը ստեղծէ եկեղեցականներէ եւ աշխարհականներէ բաղկացեալ յանձնախումբ մը՝ օրէնքով սահմանուած կարգով Պատրիարքական ընդհանուր փոխանորդին ընտրուած տեղապահին միջեւ յանձնում-ընդունում կազմակերպելու համար,

- Տեղապահի ընտրութենէն յետոյ տասնօրեայ ժամկէտով կը կազմակերպուին Նախաձեռնարկ մարմնի ընտրութիւնները՝ ըստ Պատրիարքութեան ընկալեալ ընթացակարգերուն: Նախաձեռնարկ մարմինը, իր հերթին, վեց ամսուան ընթացքին, տեղապահի գլխաւորութեամբ, կը կազմակերպէ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքի ընտրութիւնը՝ ըստ գործող ընթացակարգերու,

- Նախաձեռնարկ մարմինը ամէն ամիս հաշուետուութիւն կը ներկայացնէ Կրօնական ժողովին եւ հանրութեան՝ ընտրութիւններու կազմակերպման ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն վերաբերեալ,

- Եթէ պատրիարքական ընտրութիւնները տեղի չունենան վեց ամսուան ընթացքին, Կրօնական ժողովի հրաւէրով Պատրիարքութեան Եկեղեցական համագումար ժողովը եւ համայնքային հաստատութիւններու ատենապետներու ժողովը իրենց վերապահուած լիազօրութիւններու շրջանակէն ներս կ'առաջադրեն տեղապահի եւ Նախաձեռնարկ մարմնի նկատմամբ վստահութեան քուէի հարցը,

- Նախաձեռնարկ մարմինը ընտրական շրջանին հաւասար պայմաններ կ'ապահովէ պատրիարքական թեկնածուներուն՝ իրենց ընտրական քարոզչութեան իրականացման համար:

Փետրուարի 24-ին, գլխաւորութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Տ. Արամ արքեպիսկոպոս Աթէշեան, Տ. Գարեգին արքեպիսկոպոս Պեքճեան եւ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալեան հանդիպում ունեցան Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ եպիսկոպոսներուն հետ: Հանդիպման հրաւիրուած էր նաեւ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլճեան, իբրեւ պատրիարքական թեկնածուներէն մին:

Խորհրդակցութիւններու աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը փոխանցեց իր գնահատանքը Կ.Պոլսոյ միաբան եպիսկոպոսներու նկատմամբ՝ երկօրեայ ժողովներու ընթացքին դրսեւորուած յանձնառութեան համար՝ եղբայրական ոգով եւ նախանձախնդրութեամբ Պատրիարքութեան եւ պոլսահայութեան կեանքէն ներս ստեղծուած իրավիճակի յաղթահարման ուղղուած ջանքերուն բերումով: Նորին Սրբութիւնը փոխանցեց իր սէրն ու օրհնութիւնները Պատրիարքութեան ուխտապահ եկեղեցականաց դասուն եւ հաւատաւոր ժողովրդին՝ մաղթելով Մեծի պահոց նուիրական շրջանին ընդառաջ Աստուծոյ զօրակցութիւնը իրենց հաւատի արթնութեան եւ ազգային-եկեղեցական կեանքի շինութեան համար:

## Թուրքիոյ Մէջ Հակահայ Գործիչը Կոչ Կ'ընէ Վերահսկողութեան Տակ Առնել Թուրքիոյ Հայկական Հիմնադրամներու Գումարները



Թուրքիոյ մէջ գործող, «Հայերու անհիմն պնդումներու դէմ պայքարի» միութեան գլխաւոր նախագահ Կիոքսէլ Կիւլպէյ կոչ ըրած է վերահսկման տակ առնել Թուրքիոյ հայկական միութիւններու եւ հիմնադրամներու եկամուտները եւ գիտնալ, թէ ուր կ'ուղղուին այդ գումարները:

Նշենք, որ Թուրքիոյ մէջ կը գործէ 57 հայկական հիմնադրամ, որոնցմէ 52-ը՝ Պոլսոյ մէջ:

Ինչպէս կը յայտնէ թրքական «haberler.com» կայքը, Կիւլպէյ նշած է, որ Թուրքիան ուշադիր պէտք է ըլլայ այս միութիւններու գործունէութեան նկատմամբ: Ան մեղադրած է որոշ հայկական միութիւններ Թուրքիոյ մէջ ահաբեկչական համարուող PKK-ին աջակցութիւն ցուցաբերելու մէջ:

Ան շեշտած է նաեւ, որ հայկական միութիւններու մեծ մասի գրասենեակները կը գտնուին Պոլսոյ Թաքսիմ հրապարակի մօտակայքը եւ որ հայերը աջակցած են 2013-ին այնտեղ գտնուող Կէզի զբօսայգիի պահպանութեան ուղղուած հակակառավարական ցոյցերուն:

Կիւլպէյ նշած է, որ 16 փետրուարին Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութիւններու հետ կապուած համայնքային արտահերթ ժողովի ժամանակ հայկական միութիւններու ու հիմնադրամներու ղեկավարները դիտաւորեալ փորձած են ստիպել հրաժարական տալ պատրիարքի փոխանորդ Արամ Աթէշեանին, քանի որ բարկացած են անոր վրայ Պունտէսթակի՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող եւ դատապարտող օրինագիծի ընդունումէն ետք Թուրքիոյ նախագահ Էրտողանին յղած նամակին համար:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ------------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :----------------------- Email: -------------------------

## «Դուք Կրնաք Լուսին Այցելել, Բայց ոչ Լեռնային Ղարաբաղ. Ալիեւի Վարչակազմի Երկիւղած Քաղաքականութիւնը». Huffingtonpost



Մարդոց ազատ տեղաշարժի իրաւունքի նկատմամբ Ազրպէյճանի ոտնահարումներուն ու պլոկըր Լափշինի նկատմամբ հետախուզում յայտարարելու քայլին անդրադարձած է ամերիկեան «Huffingtonpost»-ը:

«Դուք կրնաք Լուսին այցելել, բայց ոչ Լեռնային Ղարաբաղ. Ալիեւի վարչակազմի երկիւղած քաղաքականութիւնը» վերնագրուած յօդուածն մէջ, Ալիեւեան կլանի բռնապետական ռեժիմի անօրինականութիւններուն զուգահեռ՝ կը ներկայացուի նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ծագման պատմութիւնը, թէ ինչպէս մէկ այլ բռնապետ՝ Ժոզէֆ Սթալինը 1921 թուականին 95 տոկոս հայ բնակչութիւն ունեցող Արցախը բռնակցել Ատրպէյճանական ՍՍՀ-ին՝ հիմք դնելով 1991-էն առ այսօր ծաւալուող հակամարտութեան:

«Այլ հնարքներուն զուգահեռ՝ Պաքուն կը շարունակէ պնդել, որ Լեռնային Ղարաբաղ այցելած իւրաքանչիւր օտարերկրացի ապօրինաբար հատած է Ազրպէյճանի սահմանը: Ազրպէյճանի արտաքին գործերու նախարարութիւնը 683 հոգիի յայտարարած է «պերսոնա նոն կրատա»: Երբ կը տեսնես, որ միայն անցած 2 տարիներու ընթացքին Լեռնային Ղարաբաղ մօտ 25000 զբօսաշրջիկ այցելած է, պարզ կը դառնայ, թէ ինչ անկատար է Ազրպէյճանի ցուցակը եւ ինչ անհեթեթ է պլոկըր Լափշինի ձերբակալութիւնը: Անշուշտ, Ազրպէյճանի «սեւ ցուցակին» մէջ կը յայտնուին անունք, որոնց այցելութիւնները յայտնի կը դառնան լրատուամիջոցներու միջոցաւ:

Ամերիկացի տիեզերագնաց Ջարլզ Տիւկը, սպանացի օփերային երգչուհի Մոնսերաթ Կապալիէն եւ Ֆրանսայի Ներքին գործերու գործող նախարար Պրունօ Լը Ռուն այս ցուցակի ամենաակնառու ներկայացուցիչներն են: Տիւկը 10-րդ մարդն է, որուն ոտքը դպած է Լուսինի մակերեւոյթին՝ «Ափոլո 16»-ի կազմին մէջ, սակայն ԼՂՀ այցելելէ ետք անոր ոտքը ալ չդպնայ Ազրպէյճանի հողին (եթէ պահ մը ենթադրենք, թէ ինք կ'ուզէ):

Լափշինը ճանապարհորդ-լրագրող է, որ 120 երկիրներ այցելած է: 2016-ի վերջաւորութեան ան գացած է Պելառուս. Որոշում մը, որու համար պէտք է որ զղջայ: 7 փետրուարին ան արտայանձնուեցաւ Ազրպէյճանին: Լրագրողներու պաշտպանութեան կոմիտէն 2 անգամ պահանջած է, որ այս որոշումը կասեցուի: Յատկանշական է այն փաստը, որ թէ Լուկաշէնկոն, թէ Ալիեւը լրագրողներու նկատմամբ ճնշումներ գործադրողներու ցուցակին առաջատար դիրքեր կը գրաւեն»:

«Լափշինի պլոկին մէջ կանխատեսելի զարգացումներ կը նկատուին, այն պահէն, երբ ան «ժամանած» է Պաքու: ԼՂՀ-ին վերաբերող անոր հրապարակումները հեռացուած են, իսկ այցելած երկիրներու շարքէն կը բացակայի Լեռնային Ղարաբաղ անունը:

Ըստ լրագրողներու պաշտպանութեան կոմիտէի՝ Ազրպէյճանի մէջ կայ բանտարկուած 259 լրագրող. եւ այս՝ ընդամէնը 7 միլիոն բնակչութիւն ունեցող երկրին մէջ»,- նշուած է յօդուածին մէջ:

## Հայաստանի Քաղաքացիական Հասարակութեան Կազմակերպութիւններու Կոչը Սփիւռքին




Մենք՝ Հայաստանի քաղաքացիական հասարակութեան եւ իրաւապաշտպան մի խումբ կազմակերպութիւններս, սոյն բաց նամակով դիմում ենք սփիւռքի մեր հայրենակիցներին՝ անհատների, կազմակերպութիւնների եւ ոչ ֆորմալ խմբերի՝ աքթիւ դիրքորոշում ստանձնելու Հայաստանի քաղաքական կեանքում:

Միշտ զգացել ենք մեր երկրի հանդէպ սփիւռքի մեծ սէրը եւ իրապէս երախտապարտ ենք արտերկրի մեր հայրենակիցների կողմից բազում տարիներ Հայաստանի ժողովրդին ցուցաբերած հսկայական ու երկարատեւ աջակցութեան համար: Այդուհանդերձ, 1991թ. Հայաստանի անկախութիւնից ի վեր ապրում ենք անմխիթար պայմաններում, ինչի ականատեսն էք նաեւ դուք. աղքատութիւն, բնակչութեան քանակի նուազում եւ ազգային ինքնիշխանութեան աստիճանական նահանջ: Շարունակաբար կեղծուող ընտրութիւններն ու քաղաքական կոռուպցիան (կաշառակերութիւնը) գրեթէ ողջ սոցիալ-տնտեսական իշխանութիւնը կեդրոնացրել են ոչ ներկայացուցչական օլիկարխիկ վերնախաւի ձեռքում: Բնական ռեսուրսները սպառւում են՝ ծառայելով կարճատեւ եւ փոքր խմբային շահերին, աղքատութիւնն ու սոցիալական անարդարութիւնը ահազնացող չափերի են հասնում՝ մի խումբ որոշում կայացնողների բարեկեցութեան աճին զուգահեռ: Քաղաքացիների քաղաքական ու քաղաքացիական իրաւունքները պարբերաբար ոտնահարւում են, անարդարութեան դէմ խաղաղ հաւաքները դաժանօրէն ճնշւում են, կախման մէջ գտնուող դատական իշխանութիւնն արդար դատավճիռներ չի կայացնում՝ աւելացնելով քաղաքական բանտարկեալների թիւը: Աւելին, 2016 թ. ապրիլեան քառօրեայ պատերազմը բացայայտեց, թէ ինչպէս է անվերահսկելի ու անպատժելի կոռուպցիան մսխում հայոց բանակի ռեսուրսներն ու սպառնում Հայաստանի անվտանգութեանը:

Անկախութիւնից 25 տարի անց նման պայմաններն այլեւս անընդունելի են: Առաջին հայեացքից թերեւս ոչ այդքան ակնյայտ, սակայն հենց ժողովրդավարութեան պակասով են պայմանաւորուած միւս գրեթէ բոլոր ազգային խնդիրները: Յիրաւի 21-րդ դարում ժողովրդավարութիւնն է ընկած պետութեան կառուցման հիմքում:

Մենք՝ ներքոստորագրեալներս, աշխատել ու անխոնջ պայքարել ենք յանուն Հայաստանում օրէնքի գերակայութեան եւ ժողովրդավարութեան: Զարգացրել ենք ենթակառուցուածք ու աքթիւացրել մեր քաղաքացիների ջանքերը ընտրութիւնների դիտորդութեան ուղղութեամբ, ինչը ժողովրդավարութեան միակ ամենահիմնարար գործընթացն է Հայաստանում: Բայց մեր ռեսուրսները սահմանափակ են:

Յղելով այս կոչը, ցանկանում ենք յայտնել, որ մեծապէս զգում ենք ձեր կարիքը ոչ թէ ձեր նուիրատուութիւններով ու արտերկրից ուղարկուող փոխանցումներով, այլ՝ ձեր ոգու ու ֆիզիքական ներկայութեամբ Հայաստանում՝ ընտրական տեղամասերում ներգրաւուելով դիտորդական առաքելութիւնում եւ ստանձնելով ձեր դերը Հայաստանի ժողովրդավարութեան այս պատմական փնտռտուքում:

Շար.ը էջ 18



## Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Մարդասիրական Բժշկական Նպաստը Հայոց Բանակին



Փետրուարի 20-ին, ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան Դեղօրայքի եւ Բուժտեխնիկական կեդրոնական կայանին մէջ տեղի ունեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) կողմէ որպէս օգնութիւն տրամադրուած բուժսարքաւորումներու, գործիքներու, մահճակալներու, մասնագիտական գրականութեան եւ այլ հարկաւոր կարիքներու հերթական խմբաքանակի յանձնումը: ԱՀԱԸ-ի այս մեծ նուիրատուութիւնը իրականացաւ իր անդամներէն Տօքթ. Քրիս Թաշճեանի ջանքերով:

Ներկայ էին Ընկերակցութեան Հայաստանի Ներկայացուցիչ Յարութ Ներսէսեանը, Արտաքին կապերու Պատասխանատու Լուսինէ Օհանեանը, ինչպէս նաեւ Բուժտեխնիկական կեդրոնական կայանի Գլխաւոր Պետ Նուէր Առաքելեանը:

«Այս ամէնը խիստ անհրաժեշտ են մեր հիւանդանոցներուն եւ այլ բժշկական հաստատութիւններուն համար» ըսաւ կեդրոնական կայանի Գլխաւոր Պետ Առաքելեանը: «Պէտք է շեշտեմ, որ այս առաջին օգնութիւնը չէ: 2015-ին Ընկերակցութիւնը մեր կեդրոնական Հիւանդանոցին նուիրեց բազմաթիւ էլէկդրոնային կառավարմամբ մահճակալներ եւ սարքաւորումներ: Ես կ«ուզեմ իմ շնորհակալութիւնը յայտնել ԱՀԱԸ-ին մեր բանակին մատուցած իրենց օժանդակութեան համար»:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Հայաստանի Ներկայացուցիչ Յարութ Ներսէսեանը համառօտ կերպով ըսաւ, թէ ԱՀԱԸ-ը կրցած էր այս օգնութիւնը իրականացնել Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գործող ՄԱԹԹԸՐ (Matter) կազմակերպութեան շնորհիւ, իսկ տեղափոխութիւնը ֆինանսաւորած էր Տօքթ. Քրիս Թաշճեանը: Ան շեշտեց, որ այս սարքաւորումներուն ու գործիքները մանրամասն ստուգուած էին մինչեւ անոնց Հայաստան ուղարկումը եւ հաւաստիացուց որ Պաշտպանութեան Նախարարութեան տրամադրութեան տակ գտնուող բուժհաստատութիւններու տրամադրուած այս օգնութիւնը պիտի ըլլայ շարունական:

## Արցախին Նուիրուած Գիրքի Շնորհահանդէս Ֆրանսայի Խորհրդարանէն Ներս

22 փետրուարին Ֆրանսայի խորհրդարանէն ներս Ֆրանսա-Արցախ բարեկամութեան շրջանակի նախաձեռնութեամբ տեղի ունեցած է Արցախի պատմութեան նուիրուած «15 հարց, 15 պատասխան, ամէն ինչ իմանալ ԼՂՀ մասին 10 վայրկեանի մէջ» ֆրանսալեզու գիրքի շնորհահանդէսը:




Գիրքի նպատակն է Արցախի մասին ճշգրիտ տեղեկատուութիւն տարածել ֆրանսախօս հասարակութեան շրջանակէն ներս: Միջոցառման ընթացքին անդրադարձ կատարուած է 29 տարի առաջ Արցախի մէջ սկսած ազգային-ազատագրական պայքարի պատմութեան, ինչպէս նաեւ յարգանքի տուրք մատուցուած է ատրպէյճանական իշխանութիւններու կողմէ կազմակերպուած հայերու ջարդերու զոհերուն եւ 19 փետրուար 2004-ին ատրպէյճանցի սպայ Ռ. Սաֆարովի կողմէ կացինահարուած Գուրգէն Մարգարեանին:

Շնորհահանդէսին ներկայ գտնուող Ֆրանսա-Ղարաբաղ բարեկամութեան շրջանակի նախագահ Ֆրանսուա Ռոշպլուան իր ելոյթին մէջ ողջունած է Արցախի մէջ նոր Սահմանադրութեան նախագիծի վերաբերեալ հանրաքուէի իրականացումը եւ յայտարարած շրջանակի անուանափոխման մասին՝ այն վերանուանելով Ֆրանսա-Արցախ բարեկամութեան շրջանակ:

Միջոցառման մասնակցած էին նաեւ Ֆրանսայի խորհրդարանի շարք մը պատգամաւորներ, սենաթորներ, Ֆրանսայի մէջ ՀՀ դեսպան Վիգէն Չիթէչեանը, Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեանը, քաղաքագէտներ եւ ԶԼՄ ներկայացուցիչներ:

## ONEArmenia-ի Մեկնարկած՝ «Լաչինն Առանց Ականների» Արշաւը



Լեռնային Ղարաբաղում մարդիկ առերեսւում են մշտական սպառնալիքի հետ, եւ այդ սպառնալիքը չի սահմանափակւում Ատրպէյճանի հետ շփման գծով:

### Խնդիրը

Լեռնային Ղարաբաղը ողողուած է ականներով, 1988 թուականին՝ Ատրպէյճանի հետ սկսուած արիւնալի հակամարտութեան մնացորդներով: Այս ականները թաքցուել եւ մոռացուել են: Բնակիչները՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաները, մշտապէս վտանգուած են: Նրանք կարող են պատահաբար կանգնել ականներից մէկի վրայ: 1995 թ.-ից ի վեր, եղել է 370 քաղաքացիական զոհ՝ չպայթած ականների եւ զինամթերքի հետեւանքով: Դէպքերից մէկ երրորդը ուժ ներգրաւուած են երեխաներ: Այս թուերը մէկ շնչի հաշուով ամենաբարձր ցուցանիշներից մէկն է աշխարհում:

ONEArmenia-ի եւ The HALO Trust-ի (HALO) համագործակցութեան արդիւնքում մեկնարկում է Ականազերծ Լաչին քրաուդֆանդինգ արշաւը, որի շրջանակներում կականազերծուի 31,839 մ2 տարածք Լաչինի միջանցքում՝ Մեղուաձոր գիւղի շրջակայքում: Լաչինում մնացել է թուով 31 ականադաշտ: Այս տարածքները մաքրուելուն պէս, մարդիկ կը կարողանան ապրել բնականոն կեանքով, մշակել իրենց դաշտերը, արածեցնել իրենց անասուններին, եւ այդ ամենին կը հետեւի իրենց համայնքի անվտանգ, եւ առանց դժբախտ պատահարների յետագայ զարգացումը: Հողն ականներից ազատելը տարածաշրջանի զարգացման անբաժանելի մասն է:

HALO Trust-ի կողմից մաքրուել է Լեռնային Ղարաբաղի տարածքում յայտնի ականապատ դաշտերի 88%-ը, եւ կազմակերպութիւնը յոյս ունի, որ 2020 թուականին Լեռնային Ղարաբաղը կը լինի 100%-ով ականազերծուած: Այժմ, Լեռնային Ղարաբաղը կը ծառայի որպէս փայլուն օրինակ, առ այն, թէ ինչպէս կարելի է երկրորդ շունչ տալ տարածքների, որոնք դարձել էին ոչ պիտանի պատերազմի պատճառով:

«Մենք աշխատում ենք մեկընդմիշտ լուծել խնդիրը: Երբ յայտնաբերւում են ականները, դրանք միանգամից ոչնչացւում են: Այդպիսով մարդիկ կարող են հանգիստ ապրել, առանց ֆիզիքական, մտաւոր եւ էմոցիոնալ տրաւմա ստանալու վախի», - ասում է Աշ Բոդդին, HALO ծրագրի ղեկավարը Լեռնային Ղարաբաղում:

HALO-ն սկսել է 2000 թ-ից մաքրել ականապատ դաշտերը Լեռնային Ղարաբաղում՝ հանդիսանալով միակ կազմակերպութիւնը, որը զբաղւում տուեալ խնդրով: Մինչ օրս նրանք ականազերծել են 453 ականադաշտ, որն ընդգրկում է 45 872 000մ2 հող, այդպիսով բարելաւելով մօտաւորապէս 125,000 մարդու կեանք:

Նրանք ներգրաւում են տեղի բնակչութեան, տալով հնարաւորութիւն՝ իրենց երեխաների համար անվտանգ միջավայր ստեղծելու գործընթացը վերցնել իրենց ձեռքը: Հարիւր վաթսուն վեց տեղացի տղամարդիկ եւ կանայք աշխատում են Halo-ում եւ վերապատրաստւում են ական գտնելու եւ ոչնչացնելու համար: Այդպիսով նրանք կարողանում են աջակցել իրենց ընտանիքներին եւ ապահովել իրենց համայնքների ապագան:

HALO-ի կողմից մաքրուած ականադաշտերի մեծամասնութեան համար ֆինանսաւորումը եկել է U.S. Agency for International Development (USAID)-ի կողմից: Սակայն, Մեղուաձոր գիւղը, ինչպէս եւ ողջ Լաչինի միջանցքը, չեն մտել Խորհրդային Միութեան ժամանակ Լեռնային Ղարաբաղի տարածքի սահմանների մէջ, այդ իսկ պատճառով, կառավարական կազմակերպութիւնները իրաւասու չեն կատարելու այս տարածքներում առկա ականապատ դաշտերի մաքրման աշխատանքները: Սա նշանակում է, որ HALO-ն դա պիտի անի, ստանալով նուիրատուութիւն այն անձանց կողմից, ովքեր ցանկանում են ներդրումներ կատարել Լեռնային Ղարաբաղի զարգացման գործընթացում: Նման մէկ նուիրատու, ով նախընտրում է անանուն մնալ, կը կրկնապատկի իւրաքանչիւր կատարուած նուիրատուութիւն:

«Մեր առատաձեռն անանուն նուիրատուի աջակցութեամբ հնարաւորութիւն է ընձեռնւում իւրաքանչիւր մարդու, ով ցանկանում է փոփոխութիւն բերել, ով ցանկանում է լուծումների մի մասը լինել, տեսնել իր նուիրատուութիւնը եւ կրկնապատկել դրա ազդեցութիւնը՝ ստեղծելով անվտանգ քայլեր ապագայ սերունդների համար Լեռնային Ղարաբաղում», - ասաց պրն Բոդդին:

